ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 փետրվարի 2025 թվականի N 183-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԿԱՐՏՈՖԻԼԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ, ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 2.1-ին հոդվածով, «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 8-րդ մասով և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2025 թվականի հունվարի 22-ի N 2 որոշման դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Կիրառել սակագնային արտոնություն, 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառման պայմանով, սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2025 թվականի հունիսի 30-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության տարածք՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0701 10 000 0 ծածկագրին դասվող 3,5 հազար տոննա «E» դասի (Էլիտային) և «A» դասի (առաջին վերարտադրության) կարտոֆիլի սերմացուի (այսուհետ՝ կարտոֆիլի սերմացու) նկատմամբ:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշմամբ նախատեսված սակագնային արտոնության կիրառումը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող՝ «Բացթողում՝

ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպվող սույն որոշման 1-ին կետում նշված ապրանքների վրա, որոնց վերաբերյալ ապրանքների հայտարարագիրը (այդ թվում՝ նախնական մաքսային հայտարարագիրը), իսկ մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման դեպքում՝ մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման վերաբերյալ դիմումը մաքսային մարմինների կողմից գրանցվել է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2025 թվականի հունիսի 30-ը ներառյալ, բացառությամբ՝ ԱՊՀ անդամ պետություններից ծագող և արտոնյալ ծագման հավաստագրով ներմուծվող ապրանքների.

2) Հայաստանի Հանրապետության տարածք սակագնային արտոնությամբ ներմուծվող կարտոֆիլի սերմացուի ներմուծումը թույլատրվում է սահմանված ծավալից ոչ ավելի քանակով՝ լիցենզիայի առկայության դեպքում.

3) կարտոֆիլի սերմացուի ներմուծման լիցենզիա տրամադրելու մասով լիազոր մարմին է ճանաչվում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Հաստատել՝

1) արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև կարտոֆիլի սերմացուի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) կարտոֆիլի սերմացուի ներմուծման մեկանգամյա լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) կարտոֆիլի սերմացուի ներմուծման գլխավոր լիցենզիայի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործում է մինչև 2025 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ